ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 219-Ն | *Տեսակը* | Պաշտոնական Ինկորպորացիա |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2015.03.10/12(1101).1 ՄԱՍ 2 Հոդ. 157.5 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 05.03.2015 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 10.03.2015 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 10.08.2016 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

**Ծանուցում**

29.04.21 N 675-Ն որոշումն ունի անցումային դրույթ:

21.12.23 N 2299-Ն որոշման փոփոխություններն ուժի մեջ են մտնում նույն որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

**Կապեր այլ փաստաթղթերի հետ**

**Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԾԽԱԽՈՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 540-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2015 թվականի N 219-Ն

### ԾԽԱԽՈՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի N 540-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Ծխախոտի վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 540-Ն որոշումը:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշմամբ սահմանված ծխախոտային արտադրանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացման ստուգաթերթերի հաստատումը:

***(3-րդ կետը խմբ. 29.03.19 N 297-Ն)***

3.1. Սահմանել, որ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում ծխախոտային արտադրանքը շրջանառվում է սույն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը և (կամ) «Ծխախոտային արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 035/2014) Մաքսային միության տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան:

***(3.1-ին կետը լրաց. 29.03.19 N 297-Ն)***

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 18 ամիս հետո՝ բացառությամբ սույն որոշման 3-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

5. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 17-21-րդ կետերը չեն կիրառվում 2022 թվականի ապրիլի 1-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը ծխախոտային արտադրանք արտադրողների և դրանց դիստրիբյուտորների կողմից ներմուծվող արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2402 20 և ԱՏԳ ԱԱ 2404 11 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրատեսակների նկատմամբ: Սույն կետով նախատեսված կարգավորումը կիրառելի է այն ապրանքային նշաններով մակնշված ծխախոտային արտադրատեսակների նկատմամբ, որոնցով մակնշված ծխախոտային արտադրատեսակները 2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի մարտի 31-ը ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն:

***(5-րդ կետը լրաց. 31.03.22 N 410-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**

**Հ. Աբրահամյան**

2015 թ. մարտի 10
Երևան

**Հավելված**
**ՀՀ կառավարության 2015 թվականի**
**մարտի 5-ի N 219-Ն որոշման**

## Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

## ԾԽԱԽՈՏԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ

## I. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան ծխախոտային արտադրանք հանդիսացող հետևյալ ծխախոտային արտադրատեսակների վրա՝

| | |
|---|---|
| սիգարներ, սիգարիլլաներ (սիգարիտաների), սիգարետ, կրետեկ, բիդի | 2402 10 000 0<br>2402 20 100 0<br>2402 20 900 0 |
| բարակ կտրատած ծխելու ծխախոտ, նարգիլեի ծխախոտ, ծխագլանակ | 2403 11 000 0<br>2403 19 100 0<br>2403 19 900 0 |
| տաքացվող ծխախոտով արտադրատեսակ (տաքացվող ծխախոտային գլանակ, տաքացվող<br>կապսուլա ծխախոտով) | 2404 11 000 |

***(1-ին կետը խմբ. 29.03.19 N 297-Ն, 29.04.21 N 675-Ն, փոփ. 31.03.22 N 410-Ն)***

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետում ներկայացված ծխախոտային արտադրանքի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը և պահմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև համապատասխանության գնահատման ընթացակարգերը:

***(2-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

3. Սույն տեխնիկական կանոնակարգը մշակված է մարդու կյանքն ու առողջությունը, շրջակա միջավայրը պաշտպանելու, ինչպես նաև ծխախոտային արտադրանքի նշանակության ու անվտանգության առումով սպառողներին մոլորության մեջ գցող գործողությունները կանխելու նպատակով և տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում շրջանառության մեջ դրվող ծխախոտային արտադրանքի վրա:

***(3-րդ կետը խմբ. 29.03.19 N 297-Ն)***

4. Սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետում ներկայացված ծխախոտային արտադրանքը ենթակա է համապատասխանության գնահատման:

***(4-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

4.1. Սույն տեխնիկական կանոնակարգի գործողությունը չի տարածվում հետևյալ ծխախոտային արտադրանքի վրա՝

1) ծխախոտային արտադրանքի նմուշներ, որոնք ներմուծվում են Հայաստանի Հանրապետության տարածք լաբորատորիաների, ծխախոտային արտադրատեսակներ արտադրողների և (կամ) ներմուծողների (վաճառողների) կողմից և նախատեսված են որակի ու անվտանգության հսկողության, միջազգային ստանդարտներին համապատասխան չափումների, միջլաբորատոր համեմատական փորձարկումների անցկացման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան նորմավորվող պարամետրերի չափումների, սարքավորումների տրամաչափարկման, համեմատական թեստերի, համտեսի (դեգուստացիաների) անցկացման, դիզայնի ուսումնասիրման համար.

2) ծխախոտային արտադրանքի նմուշներ, որոնք միջազգային ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպիչների և (կամ) մասնակիցների կողմից որպես նմուշներ և ցուցանմուշներ ներմուծվում են Մաքսային միության մաքսային տարածք.

3) ծխախոտային արտադրանք, որն արտահանվում է Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններից դուրս՝ արտաքին առևտրային պայմանագրերի համաձայն:

***(4.1-ին կետը լրաց. 29.03.19 N 297-Ն)***

## II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառված են «Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին» օրենքով և սույն բաժնով նախատեսված հետևյալ հասկացությունները՝

1) ***(ենթակետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

3) ***սպառողական տարա***՝ տարա, որով իրացվում է արտադրատեսակը և, որը փոխադրական տարա չէ.

4) ***փոխադրական տարա***՝ տարա, որը կազմում է ինքնուրույն փոխադրական միավոր.

5) ***տուփ***՝ սպառողական տարայի միավոր, որը պարունակում է որոշակի քանակով ծխախոտային արտադրատեսակ.

6) ***(ենթակետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

7) ***բլոկ***՝ խմբակային սպառողական տարայի միավոր, որը պարունակում է թղթով կամ պոլիմերային թաղանթով փաթաթված կամ թղթե ժապավենով փաթաթված որոշակի քանակությամբ սիգարետներով կամ ծխագլանակներով տուփեր.

8) ***ծխախոտային արտադրատեսակի մակնիշ***՝ որոշակի սպառողական հատկություններ ունեցող ծխախոտի արտադրանքի անվանում, որով նույնականացվում է ծխախոտի արտադրանքի յուրաքանչյուր առանձին տեսակը (ենթատեսակը).

9) ***ծխախոտային արտադրատեսակի խմբաքանակ***՝ վերահսկման ենթակա միևնույն մակնիշի և փաթեթավորմամբ ծխախոտային արտադրատեսակի քանակ.

10) ***ծխախոտային արտադրանք***՝ սպառողական փաթեթվածքում փաթեթավորված ծխախոտային արտադրատեսակ.

11) ***տաքացվող ծխախոտ***՝ ծխախոտային արտադրանք, որը պարունակում է ծխախոտային հումք և նախատեսված է միայն տաքացման սարքով օգտագործման համար՝ առանց այրման կամ կիսաայրման:

***(5-րդ կետը փոփ., լրաց. 29.03.19 N 297-Ն, 29.04.21 N 675-Ն)***

## III. ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴՈՒՐՍԲԵՐՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԻՐԱՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

6. Արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը պետք է կիրառի անհրաժեշտ միջոցներ, որպեսզի երաշխավորի, որ շրջանառության մեջ դրվող ծխախոտային արտադրանքն անվտանգության ապահովման հարցերով արտադրված է սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխան, մարդու կյանքի և առողջության, ֆիզիկական և իրավաբանական անձանց ու պետական գույքի, կենդանիների և բույսերի կյանքի և առողջության, շրջակա միջավայրի համար վտանգի աղբյուր չէ, ինչպես նաև չի պարունակում անվտանգության վերաբերյալ սպառողներին թյուրիմացության մեջ գցող գործոններ:

***(6-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն)***

7. Հայաստանի Հանրապետության տարածքում սույն տեխնիկական կանոնակարգի 1-ին կետում նշված ծխախոտային արտադրանքի շրջանառության դուրսբերումը, այդ թվում՝ իրացումը՝ առանց համապատասխանության գնահատման և (կամ) համապատասխանության ազգային նշանի՝ արգելվում է:

***(7-րդ կետը փոփ., լրաց. 29.03.19 N 297-Ն)***

8. Հայաստանի Հանրապետության տարածքում ծխախոտային արտադրանքը պետք է ուղեկցվի համապատասխանության հայտարարագրով և (կամ) համապատասխանության ազգային նշանով:

***(8-րդ կետը փոփ., լրաց. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն)***

9. Ծխախոտային արտադրանքի և ծխախոտային արտադրանքի արտադրական թափոնների օգտահանումը

(ոչնչացումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

***(9-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

## IV. ԾԽԱԽՈՏԱՀՈՒՄՔԻՆ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

***(վերնագիրը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

10. Ծխախոտահումքի և ծխախոտային արտադրանքի անվտանգությունը բնութագրող ցուցանիշները ներկայացված են սույն տեխնիկական կանոնակարգի N 2 աղյուսակում 10.1-ին, 11-րդ ու 12-րդ կետերում:

Աղյուսակ N 1

### ԾԽԱԽՈՏԱՀՈՒՄՔԻ ՖԻԶԻԿԱՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

***(աղյուսակն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

Աղյուսակ N 2

### ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻԿԱՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

***(վերնագիրը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

| Ծխախոտային արտադրատեսակը | Ցուցանիշի անվանումը | Նորմը |
|---|---|---|
| Սիգարետ | Խոնավությունը, % | 11 - 15 |
| | Նիկոտինի առավելագույն պարունակությունը մեկ սիգարետի (ֆիլտրով և առանց ֆիլտրի) ծխում չպետք է գերազանցի, մգ/սիգ, | 1 |
| | Խեժի առավելագույն պարունակությունը մեկ սիգարետի (ֆիլտրով և առանց ֆիլտրի) ծխում չպետք է գերազանցի, մգ/սիգ | 10 |
| Սիգար, սիգարիլլա | Խոնավությունը, % | 10 - 14 |
| Ծխագլանակ | | 11 - 15 |
| Ծխելու ծխախոտ | | 12 - 16 |
| Ծխամորճի ծխախոտ | | 11,5 - 15,5 |
| Տաքացվող ծխախոտ | խոնավություն (%) | 7-ից ոչ պակաս |
| | գլիցերին թորած (%) | 95-ից ոչ պակաս մաքրությամբ |
| | պրոպիլենգլիկոլ (%) | 95-ից ոչ պակաս մաքրությամբ |

***(աղյուսակը փոփ. 29.03.19 N 297-Ն, լրաց. 29.04.21 N 675-Ն)***

***(10-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն, լրաց. 29.04.21 N 675-Ն)***

10.1. Ծխախոտահումքի և ծխախոտային արտադրանքում ածխածնի օքսիդի առավելագույն պարունակությունը մեկ սիգարետի ծխում չպետք է գերազանցի 10 մգ/սիգ:

***(10.1-ին կետը լրաց. 29.03.19 N 297-Ն)***

10.2. Տաքացվող ծխախոտի օգտագործման ընթացքում պետք է բացառված լինի ծխախոտի այրումը կամ կիսաայրումը, ինչը որոշվում է ծխախոտային գոլորշու գազային ֆազայում 100 սմ3 0.3 մգ-ից ոչ ավելի ածխածնի մոնոօքսիդի պարունակությամբ:

***(10.2-րդ կետը լրաց. 29.04.21 N 675-Ն)***

11. ***(կետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

12. ***(կետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

13. ***(կետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

14. Ծխախոտային արտադրանքի արտադրության ժամանակ արգելվում է օգտագործել որպես բաղադրիչներ տեխնիկական կանոնակարգի N 3 աղյուսակով ներկայացված նյութերը՝

Աղյուսակ N 3

| NN ը/կ | Արգելվող նյութերը |
|---|---|
| 1. | ազարինաթթու (Acidumagaricinicum).<br>կեչու ձյութայուղ (Gleum Betulaeempyreumaticum).<br>դառը նուշի յուղ (Gleum Amygdalarumamarum)՝ ազատ կամ կապված սինիլաթթվի պարունակությամբ<br>սասաֆրասի յուղ (Gleum Sassafratis).<br>գիհու ձյութայուղ (Gleum Juniperi Empyreumaticum).<br>կամֆորայի յուղ (Gleum Camphqratum).<br>կամֆորա<br>կումարին<br>կանճրակ<br>կենսաածառ՝ թույա |
| 2. | Այն նյութերը, որոնց շրջանառությունն արգելված է՝ Եվրասիական տնտեսական միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջազգային պայմանագրերին համապատասխան: |
| 3. | Բուրավետիչ և համային նյութեր՝ պատրաստված.<br>դառը և քաղցր համով մորմի փայտե ցողունից (Stipites Dulcamarae)<br>կամֆորայի ծառի փայտից (Lignum Camphqrae)<br>բազմոտիկ սովորական կոճղարմատից (Rhizqma Pqiypqdii)<br>ճահճային դաղձի տերևներից (Herba Pulegii), կվասսիայի փայտից (Lignum Quassiae), օճառածառի կեղևից (Cqrtex Quillaja)<br>տարկավանի խոտերից (Herba Tanaceti)<br>սատապի խոտեր (Herba Rutae)<br>սասաֆրասի ցողուններից, տերևներից<br>կեղևից (Stipes, Fqlium, Cqrtex Sassafratis)<br>դեղատու իշառվույտից (Millilqtus qfficinalis)<br>տոնկա հատիկներից (Semen Tqncae)<br>հոտավետ լիատրիսից (Liatris qdqratissima)<br>գետնաստղից (Asperulaqdqrata) |

***(14-րդ կետը խմբ. 29.03.19 N 297-Ն)***

15. ***(կետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

## V. ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱԿՆՇՄԱՆՆ ՈՒ ՓԱԹԵԹԱՎՈՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՀՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

***(վերնագիրը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

16. ***(կետն ուժը կորցրել է 29.03.19 N 297-Ն)***

17. Ծխախոտային արտադրանքի տուփի յուրաքանչյուր միավորը, ինչպես նաև բլոկը և ծխամորճի ու ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթում տեղադրվող ներդիր թերթիկը պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը՝

1) արտադրանքի անվանումը («Սիգարետներ», «Ծխագլանակներ», «Սիգարներ», «Սիգարիլլաներ», «Ծխամորճի ծխախոտ», «Տաքացվող ծխախոտի գլանակ», «Տաքացվող կապսուլա ծխախոտով» կամ «Ծխելու ծխախոտ»).

2) մակնիշը կամ ապրանքային նշանը.

3) արտադրողի և լիցենզավորողի (առկայության դեպքում) անվանումները և գտնվելու վայրը կամ այն կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը, որն արտադրող կազմակերպությունում հսկում է իրեն պատկանող մակնիշներով ծխախոտային արտադրանքի արտադրության գործընթացը, օգտագործվող հումքը և որակը՝ այդ դեպքում մակնշվածքում նշելով նաև արտադրող երկիրը.

4) Հայաստանի Հանրապետությունում սպառողների բողոքներն ընդունող կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը (եթե արտադրողը գտնվում է այլ երկրում).

5) ֆիլտրի առկայությունը.

6) քանակը՝ հատերով, կամ զանգվածը՝ գրամներով (ծխամորճի և ծխելու համար).

7) մենթոլի առկայությունը.

8) ծխելու վնասակարության վերաբերյալ հիմնական և լրացուցիչ նախազգուշացումները՝ սույն տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետին համապատասխան.

9) նիկոտինի, խեժի պարունակությունը մեկ սիգարետի ծխում (միայն սիգարետների համար)՝ սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետին համապատասխան.

10) Տաքացման համար նախատեսված սարքի անվանումը, որի հետ օգտագործվում է տաքացվող ծխախոտով արտադրատեսակը:

***(17-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն, փոփ., լրաց. 29.04.21 N 675-Ն)***

17.1. Ծխախոտային արտադրատեսակի տուփի վրա պետք է մակնշված լինի դրա առավելագույն մանրածախ գինը Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 817-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան:

***(17.1-ին կետը փոփ. 25.05.17 N 558-Ն)***

18. Մարդու առողջության վրա ծխախոտի ունեցած բացասական ազդեցության մասին նախազգուշացման տեքստերը լինում են՝

1) հիմնական նախազգուշացման տեքստերով՝

ա. «Ծխելը վնասակար է առողջությանը», կամ «Ծխախոտի օգտագործումը վնասակար է առողջությանը» (տաքացվող ծխախոտի համար),

բ. «Ծխելը կարող է լինել մահացու», կամ «Ծխախոտի օգտագործումը կարող է լինել մահացու» (տաքացվող ծխախոտի համար),

գ. «Ծխելը լրջորեն վնասում է Ձեզ և Ձեզ շրջապատող անձանց», կամ «Ծխախոտի օգտագործումը լրջորեն վնասում է Ձեզ և Ձեզ շրջապատող անձանց» (տաքացվող ծխախոտի համար).

2) լրացուցիչ նախազգուշացման տեքստերով՝

ա. «Ծխելն առաջացնում է թոքի քաղցկեղ», կամ «Ծխախոտի օգտագործումն առաջացնում է թոքի քաղցկեղ» (տաքացվող ծխախոտի համար),

բ. «Պահպանեք երեխաներին՝ թույլ մի տվեք նրանց շնչել ծխախոտի ծուխը»,

գ. «Ծխելը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային», կամ «Ծխախոտի օգտագործումը հղիության ընթացքում վնասում է Ձեր ապագա երեխային» (տաքացվող ծխախոտի համար),

դ. «Ծխելն առաջացնում է սիրտ-անոթային հիվանդություններ», կամ «Ծխախոտի օգտագործումն առաջացնում է սիրտ-անոթային հիվանդություններ» (տաքացվող ծխախոտի համար),

ե. «Ծխելը հանգեցնում է անոթների խցանման և հանդիսանում է սրտի և ուղեղի կաթվածի պատճառ», կամ «Ծխախոտի օգտագործումը հանգեցնում է անոթների խցանման և հանդիսանում է սրտի և ուղեղի կաթվածի պատճառ» (տաքացվող ծխախոտի համար),

զ. «Ծխելը թողնելով՝ կարող եք նվազեցնել սրտի և թոքերի մահաբեր հիվանդությունների հավանականությունը», կամ «Ծխախոտի օգտագործումը դադարեցնելով՝ կարող եք նվազեցնել սրտի և թոքերի մահաբեր հիվանդությունների հավանականությունը» (տաքացվող ծխախոտի համար),

է. «Ծխելը վնասում է սերմնահեղուկը և նվազեցնում վերարտադրողականությունը», կամ «Ծխախոտի օգտագործումը վնասում է սերմնահեղուկը և նվազեցնում վերարտադրողականությունը» (տաքացվող ծխախոտի համար),

ը. «Ծխելն առաջացնում է թոքի մահացու քաղցկեղ», կամ «Ծխախոտի օգտագործումն առաջացնում է թոքի մահացու քաղցկեղ» (տաքացվող ծխախոտի համար):

***(18-րդ կետը լրաց. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն, 29.04.21 N 675-Ն)***

19. Ծխելու կամ ծխախոտի օգտագործման վնասակարության վերաբերյալ հիմնական նախազգուշացման տեքստը պետք է զետեղվի ցանկացած տուփի 2 առավել մեծ մակերեսով կողմերից մեկի վրա, իսկ լրացուցիչ նախազգուշացման տեքստը՝ մյուսի վրա: ***(նախադասությունը հանվել է 29.03.19 N 297-Ն)*** Նախազգուշացման տեքստերը պետք է ներառվեն սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնեն ծխախոտային արտադրանքի մեծածախ ու մանրածախ առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) 2 առավել մեծ կողմերից յուրաքանչյուրի մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը՝ ներառյալ շրջանակը (օրինակները ներկայացված են սույն տեխնիկական կանոնակարգի NN 1 և 2 ձևերով) և համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) նախազգուշացման տեքստերը պետք է տպված լինեն այնպես, որպեսզի բացառվի դրանք հեռացնելու հնարավորությունը, և տպված լինեն՝

ա. հստակ ու ընթեռնելի,

բ. մուգ թանաքով՝ հակադիր ֆոնի վրա,

գ. Արիալ Արմենիան (Arial Armenian) թավ տառատեսակով, հիմնական նախազգուշացման տեքստերը՝ մեծատառերով, լրացուցիչ նախազգուշացման տեքստերը՝ փոքրատառերով՝ բացառությամբ առաջին տառի՝ մեծատառ.

2) հիմնական և լրացուցիչ նախազգուշացման տեքստերը շրջագծող շրջանակի հաստությունը պետք է լինի 3-4 մմ.

3) տառատեսակի չափը պետք է ընտրված լինի այնպես, որպեսզի նախազգուշացման տեքստերն զբաղեցնեն դրանց համար նախատեսված մակերեսի հնարավոր առավելագույն մասը.

4) նախազգուշացման տեքստերը պետք է գտնվեն դրանց համար նախատեսված մակերևույթի կենտրոնում, տուփի վերին եզրին զուգահեռ և բացելիս հնարավոր լինի խուսափել այն վնասելուց.

5) նախազգուշացման տեքստերը չպետք է՝

ա. տպագրվեն կամ ամրացվեն թափանցիկ կամ արտաքին փաթեթավորման տարր համարվող թղթի վրա,

բ. թաքնված կամ ծածկված լինեն այլ տպագրված տեղեկատվությամբ կամ պատկերով,

գ. տպագրված լինեն սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) ակցիզային դրոշմանիշերի վրա,

6) ծխամորճի և ծխելու ծխախոտների թափանցիկ փաթեթվածքների դեպքում՝ սույն տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետով նախատեսված՝ ծխելու վնասակարության վերաբերյալ նախազգուշացման տեքստերը պետք է զետեղվեն ներդիր թերթիկի վրա և զբաղեցնեն դրա մակերևույթի 30 տոկոսից ոչ պակաս մակերեսը.

7) սույն տեխնիկական կանոնակարգի 18-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված տարբերակներով լրացուցիչ նախազգուշացման տեքստերը պետք է նշված լինեն ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) վրա՝ ապահովելով ծխախոտային արտադրանքի սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) վրա դրանց փոփոխելու հնարավորությունը:

***(19-րդ կետը փոփ., խմբ. 29.03.19 N 297-Ն, լրաց., փոփ. 29.04.21 N 675-Ն)***

20. Հայաստանի Հանրապետությունում սպառողների բողոքներն ընդունող կազմակերպության մասին տեղեկատվությունը թույլատրվում է զետեղել տուփի ներսում՝ կարդալու համար հարմար տեղում (եթե արտադրողը գտնվում է այլ երկրում):

21. Նիկոտինի, խեժի պարունակության վերաբերյալ տեքստերը պետք է ներառվեն սև գույնի շրջանակի մեջ և զբաղեցնեն մեծածախ ու մանրածախ առևտրում օգտագործվող սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի և բլոկի) կողմնային մակերևույթի 10 տոկոսից ոչ պակաս մակերեսը՝ ներառյալ շրջանակը, և համապատասխանեն սույն տեխնիկական կանոնակարգում ներկայացված օրինակներին (NN 1 և 2 ձևեր) ու հետևյալ պահանջներին՝

1) նիկոտինի, խեժի պարունակության վերաբերյալ տեքստերը պետք է տպված լինեն այնպես, որպեսզի բացառվի դրանք հեռացնելու հնարավորությունը և լինի տպված՝

ա. հստակ ու ընթեռնելի,

բ. մուգ թանաքով՝ հակադիր ֆոնի վրա,

գ. «Արիալ Արմենիան (Arial Armenian) թավ տառատեսակով, «ՆԻԿՈՏԻՆ՝», «ԽԵԺ՝» բառերը՝ մեծատառերով, նիկոտինի, խեժի չափման միավորները՝ փոքրատառերով.

2) նիկոտինի, խեժի պարունակության վերաբերյալ տեքստերը շրջագծող շրջանակի հաստությունը պետք է լինի 3-4 մմ.

3) տառատեսակի չափը պետք է ընտրված լինի այնպես, որպեսզի նիկոտինի, խեժի պարունակության վերաբերյալ տեքստը զբաղեցնի դրա համար նախատեսված մակերեսի հնարավոր առավելագույն մասը.

4) նիկոտինի, խեժի պարունակության վերաբերյալ տեքստը պետք է տպված լինի դրանց համար նախատեսված մակերեսի կենտրոնում, տուփի կողմնային եզրին զուգահեռ և բացելիս հնարավոր լինի խուսափել այն վնասելուց.

5) նիկոտինի, խեժի պարունակության վերաբերյալ տեքստը չպետք է՝

ա. տպագրվի կամ ամրացվի թափանցիկ կամ արտաքին փաթեթավորման տարր համարվող թղթի վրա.

բ. թաքնված կամ ծածկված լինի այլ տեղեկատվությամբ կամ պատկերով.

գ. տպագրված լինի սպառողական փաթեթի (ծխախոտի տուփի) ակցիզային դրոշմանիշերի վրա:

***(21-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն)***

22. Թույլատրվում է ծխախոտահումքի տրանսպորտային փաթեթվածքի, ինչպես նաև ծխախոտային արտադրանքի տուփերի, բլոկերի, ծխամորճի և ծխելու ծխախոտների, ներդիր-թերթիկների վրա արտադրանքը բնութագրող այլ տեղեկությունների լրացուցիչ զետեղումը, որոնք չեն հակասում սույն տեխնիկական կանոնակարգի 16-րդ և 17-րդ կետերում նշված տվյալներին, սակայն չի թույլատրվում «Նիկոտինի (խեժի) ցածր պարունակություն», «Թեթև», «Շատ թեթև» («Գերթեթև»), «Փափուկ», «Յուրահատուկ ֆիլտր» կամ ցանկացած այլ՝ մոլորության մեջ գցող տերմինների օգտագործումը, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստում են տվյալ ծխախոտային արտադրատեսակի պակաս վտանգավոր լինելու մասին կարծիքի ձևավորմանը:

***(22-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

23. Արտադրողը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետությունում իրացվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող կամ ներմուծվող ծխախոտային արտադրանքի մասին սույն կանոնակարգի 17-րդ և 22-րդ կետերում նշված տեղեկատվության տրամադրումը՝ հայերենով: Արտադրողի ու լիցենզավորողի անվանումները և ծխախոտային արտադրանքի մակնիշները կամ ապրանքային նշանները կարող են ներկայացվել լատիներեն տառերով:

*(23-րդ կետը փոփ., լրաց. 29.03.19 N 297-Ն)*

24. Ծխախոտահումքը պետք է պահվի չոր, մաքուր, լավ օդափոխվող, ամբարային վնասատուներով չվարակված պահեստներում, որոնց հատակը պետք է լինի փայտե՝ առանց ճեղքերի: Եթե հատակը փայտե չէ, ապա կապոցներն ու հակերը պետք է դասավորվեն փայտե տախտակամածի վրա:

25. Ծխախոտային արտադրանքը պետք է պահվի հողի մակերևույթից բարձր հատակ ունեցող չոր, մաքուր, (60±10)% օդի հարաբերական խոնավություն ունեցող շենքերում և դասավորված լինի շենքի հատակից առնվազն 10 սմ բարձր:

*(25-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն)*

## VI. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

26. Սույն տեխնիկական կանոնակարգին ծխախոտային արտադրատեսակների համապատասխանությունն ապահովվում է դրա անվտանգության պահանջների, տեխնիկական կանոնակարգի N 4 աղյուսակով ներկայացված ստանդարտների անվանացանկում ներառված ստանդարտների կիրառմամբ և անմիջական կատարմամբ:

*(26-րդ կետը խմբ. 29.03.19 N 297-Ն)*

27. Ծխախոտահումքի և ծխախոտային արտադրատեսակների փորձարկման մեթոդները և չափումները սահմանվում են տեխնիկական կանոնակարգի N 4 աղյուսակում ներառված ստանդարտներով՝

Աղյուսակ N 4

| | | |
|---|---|---|
| 1. | ՀՍՏ 294-2008 (ԻՍՕ 10315:2000 MOD) | Սիգարետներ. Ծխի խտուցքում նիկոտինի պարունակության որոշում. Գազաքրոմատագրման մեթոդ |
| 2. | ՀՍՏ 325-2010 (ԻՍՕ 8454:2007 MOD) | Սիգարետներ. Սիգարետի ծխի գազային ֆազում ածխածնի մոնօքսիդի պարունակության որոշում (NDIR մեթոդ) |
| 3. | ՀՍՏ ԻՍՕ 4387-2008 | Ընդհանուր և նիկոտին չպարունակող չոր նյութի որոշում սովորական ծխեցնող մեքենայով |
| 4. | ԳՕՍՏ ԻՍՕ 3308-2015 | Լաբորատոր սովորական մեքենա սիգարետների ծխեցման համար (ծխեցնող մեքենա).<br>Սահմանումներ և ստանդարտ պայմաններ |
| 5. | ԳՕՍՏ ԻՍՕ 3402-2003 | Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ.<br>Լավորակման և փորձարկման մթնոլորտներ |
| 6. | ԳՕՍՏ 30622.1-2003 | Սիգարետներ. Ջրի պարունակության որոշումը ծխի խտուցքում. Գազային քրոմատագրության մեթոդ |
| 7. | ՀՍՏ ԻՍՕ 12863-2014 | Սիգարետների բոցավառման հակվածության գնահատման ստանդարտ փորձարկման մեթոդ |
| 8. | ՀՍՏ ԻՍՕ 16055-14 (ԻՍՕ 16055:2012 IDT) | Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ.<br>Հսկիչ նմուշ. Պահանջներ և կիրառում |
| 9. | ԳՕՍՏ 31632-2012 | Սիգարետներ. Նմուշառում |
| 10. | ՉԻՄ 01-2009 | Բարակ կտրված ծխախոտի և ծխամորճի ծխախոտի լայնության չափման իրականացման մեթոդիկա |

| | | |
|---|---|---|
| 11. | ՉԻՄ 02-2009 | Սիգարների և սիգարիլների հաստության չափման իրականացման մեթոդիկա |
| 12. | ԳՕՍՏ 6824-96 Գլիցերին թորած | Ընդհանուր տեխնիկական պայմաններ |
| 13. | ԳՕՍՏ 8072-77 Ֆերմենտացված ծխախոտի հումք | Տեխնիկական պայմաններ |
| 14. | ԳՕՍՏ 26996-86 Պոլիպրոպիլեն և պրոպիլենի համապոլիմերներ | Տեխնիկական պայմաններ |

***(աղյուսակը լրաց. 29.04.21 N 675-Ն)***
***(27-րդ կետը խմբ. 29.03.19 N 297-Ն, լրաց. 29.04.21 N 675-Ն)***

## VII. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

28. Սույն տեխնիկական կանոնակարգին ծխախոտային արտադրանքի համապատասխանության գնահատումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի «Համապատասխանության գնահատման ընթացակարգերը սահմանելու մասին» N 56-Ն որոշմամբ հաստատված հայտարարագրման Ա1, Ա2, Գ1, Գ2, Դ, Դ1 ընթացակարգերից որևէ մեկի միջոցով:

***(28-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

29. Ծխախոտային արտադրանքի սպառողական և փոխադրական տարաների վրա կամ ապրանքաուղեկից փաստաթղթերում համապատասխանության ազգային նշանը դրվում է Հայաստանի Հանրապետության 2013 թվականի մարտի 14-ի «Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի նմուշը (նկարագիրը), կիրառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 9-ի N 1281-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 337-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ արտադրողի կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցչի կողմից:

***(29-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

30. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան ծխախոտային արտադրանքի հայտարարագրման համար ապացուցողական նյութեր են՝

1) սպառողական տարայի նմուշը կամ ներդիր թերթիկը.

2) համապատասխանության գնահատման նշանակված մարմնի կողմից կատարված սիգարետների փորձարկումների արձանագրությունները, որոնցով հավաստվում է մեկ սիգարետի ծխում նիկոտինի ու խեժի պարունակությունը և մեկ ֆիլտրով սիգարետի ծխում ածխածնի օքսիդի պարունակության համապատասխանությունը սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ կետով սահմանված պահանջներին:

***(30-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

31. Արտադրողի կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցչի ընտրությամբ կարող են ընդգրկվել այլ փաստաթղթեր, որոնք վերջինիս համար հիմք են ծառայում սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ծխախոտային արտադրանքի համապատասխանությունը հայտարարագրելու համար, այդ թվում՝ որակի կառավարման համակարգի սերտիֆիկատը:

***(31-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

32. Արտադրողը կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը կարող է համապատասխանության հայտարարագիր ընդունել թողարկվող յուրաքանչյուր անվանման ծխախոտային արտադրատեսակի կամ մեկ տեսակի ծխախոտային արտադրատեսակի ամբողջ տեսականու համար:

***(32-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

33. Համապատասխանության հայտարարագիրը պետք է ներառի հետևյալ տեղեկատվությունը՝

1) արտադրողի կամ Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցչի անվանումը և գտնվելու վայրը (կամ բնակության վայրը) և ստորագրությունը.

2) սպառողական տարայի և (կամ) ներդիր-թերթիկի վրա նշված հետևյալ տեղեկատվությունները՝

ա. ծխախոտային արտադրատեսակը,

բ. ծխախոտահումքի կամ ծխախոտային արտադրատեսակի անվանումը կամ ծխախոտային արտադրանքի անվանումները,

գ. սիգարետների համար ֆիլտրի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև նիկոտինի ու խեժի պարունակությունը մեկ սիգարետի ծխում պարունակությունը մեկ ֆիլտրով սիգարետի ծխում.

3) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ հայտարարություն, որին պետք է համապատասխանի արտադրանքը՝ ներառյալ հղումներ փոխկապակցված ազգային ստանդարտներին և իրականացված համապատասխանության գնահատման ընթացակարգերին.

4) հղում սահմանված պահանջներին համապատասխանության ապացույց հանդիսացող մասնագրերին (դրանց կիրառման դեպքում).

5) հայտարարագրի ձևակերպման ամսաթիվը.

6) համապատասխանության գնահատման ընթացակարգ իրականացրած համապատասխանության գնահատման նշանակված մարմնի անվանումը, հասցեն և (անհրաժեշտության դեպքում) նույնականացման կոդը.

7) համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը:

***(33-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

34. Համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը՝ ստորագրվելու օրվանից չպետք է գերազանցի երեք տարին:

## VIII. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

35. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին ծխախոտային արտադրանքի համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողությունը պետք է իրականացվի «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

***(35-րդ կետը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

Ձև N 1

## ԾԽԱԽՈՏԻ ՏՈՒՓԻ ՎՐԱ ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԻԿՈՏԻՆԻ, ԽԵԺԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՔՍՏԵՐԻ ԶԵՏԵՂՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

***(վերնագիրը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

***(ձևը փոփ. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն)***

Ձև N 2

## ԲԼՈԿԻ ՎՐԱ ԾԽԵԼՈՒ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՆԻԿՈՏԻՆԻ, ԽԵԺԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՔՍՏԵՐԻ ԶԵՏԵՂՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ

***(վերնագիրը փոփ. 29.03.19 N 297-Ն)***

***(ձևը փոփ. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն)***

***(հավելվածը լրաց. 25.05.17 N 558-Ն, փոփ., լրաց., խմբ. 29.03.19 N 297-Ն, խմբ. 08.08.19 N 1040-Ն, խմբ., փոփ., լրաց. 29.04.21 N 675-Ն, փոփ. 31.03.22 N 410-Ն)***